



Զապել Եսայան

Միլիտարի պարտեզները

Նախակը

Քորոնան գտաւ յոյն վստահելի նաւավար մը եւ նաւակը վարձեցինք ինձ եւ Ֆայիզէի համար: Ամեն ինչ կարգադրուեցաւ ինչպէս երազի մէջ կարծես հմայքով:

Մայրամուտի մօտ երկուքով կ'երթայինք ծովեզերք: Կը քալէինք ծովափէն մեր ճերմակ քողերով գլուխնիս ծածկած: Անսահման երաժշտութեան պէս կը լսէինք ծովին ռիթմիկ երթելեկը, որուն կոհակները կու գային մինչեւ մեր ոտքերուն առաջ եւ մըմնջալով կը մարէին իրենց փրփուրներուն մէջ:

Երբեմն քամին յանկարծ կը բարձրանար, մեզ շնչասպառ կ'ընէր եւ փրփուրի ծուէններ կը տանէր մինչեւ ժժմակներու փշուրներու վրայ, պատառոտուն ժանեակի մը պէս: Չմեկնած կամ արդէն նոր հասած ձկնորսի նաւեր, փայտաշէն նաւամատոյցներու կողքին, յանկարծ շարժման մէջ կը մտնէին եւ իրենց տեղերուն վրայ պահ մը կ'ալեկոծուէին:

Յետոյ յանկարծ ծովը կ'անշարժանար: Կը դիմէինք դէպի մեր նաւակը, կը նստէինք կարմիր թաւիշէ նստարանին վրայ քով քովի: Այդ միջոցին Անասթաս, յոյն նաւավարը, թեւերը սոթած, թիերը կը շարժէր եւ նաւը մեղմիկ կը բացուէր:

Արեւը կը թեքուէր հորիզոնին վրայ եւ նաւակը կ'երթար ու կու գար ափունքին հետեւելով: Երբեմն նաւավարը կը խանգարէր մեր խոհուն լռութիւնը եւ կը սկսէր խօսիլ իր հոգերուն վրայ: Պարտքով գնած էր նաւակը եւ կը յուսար որ բացի

վարձքէն, նուէր մըն ալ պիտի ստանար: Իր նպատակն էր այս նաւակը ծախել եւ
աւելի մեծ նաւ մը գնել, որով կարենար երթելեկել կղզիներուն եւ ասիական
ափունքին միջեւ: Այն ատեն մտադիր էր ամուսնանալ:

Իրիկուն մը ուրիշ նաւակ մը երեւցաւ ծովուն վրայ: Անիկա մասնաւորի գեղեցիկ
նաւ մըն էր, յունական տարագ հագած նաւավարով: Նաւորդը հիւանդ
երիտասարդ մըն էր, հասած հիւծումի ծայրայեղ աստիճանին: Անոր տժգոյն
ճակատին վրայ բարկ յօնքերը վեր թառած, սրդողած մարդու արտայայտութիւն
մը կու տային դէմքին: Բայց առաջին հանդիպումէն իսկ երիտասարդը մեզ
նայեցաւ եւ տկար ժպիտ մը երեւցաւ անոր շրթներուն վրայ:

Մինչեւ ուշ ատեն երկու նաւակները երթելեկեցին եւ վերջապէս կանգ առին
տարբեր նաւամատոյցներու առաջ:

Հետեւեալ օրը, ծովուն վրայ կրկին հանդիպեցանք հիւանդ երիտասարդին: Անոր
լայնաբիւր աչքերը մեզ երկուքիս նայեցան հաճոյքով: Յետոյ նաւակները
հեռացան տարբեր ուղղութիւններով բայց ետեւ դառնալով տեսանք որ
երիտասարդը նոյնպէս ետեւ դարձեր էր եւ կը ժպտէր մեզ: Ֆայիզէ հառաչեց եւ
յանկարծ ժպիտը սառեցաւ շրթներուն վրայ:

Արեւը մայր պիտի մտնէր եւ երկնականարը բոցավառ, ոսկի կը տեղար ծովուն
վրայ: Հարաւային թեթեւ քամի մը կ'ուռեցնէր ծովը եւ կոհակները լայննալով
նաւակը կարծես կը գրկէին, յետոյ կը բարձրացնէին: Թեթեւ գլխապտոյտ մը մեզ
տարտամ կը դարձնէր, կարծես գինով էինք:

Յանկարծ նշմարեցի որ Ֆայիզէ տժգոյն է սովորականէն աւելի: Անիկա կը
դողար կզակը կափկափելով:

Կը յիշեմ անձկութեան օրերը, տագնապալի գիշերները: Ֆայիզէ թոքերու
բորբոքումէ կը տառապէր: Ան ապաքինեցաւ, ոտքի ելաւ, բայց Նահատ պէյ
տարակոյսով կը շարժէր գլուխը եւ հօրս կ'ըսէր որ այդ հիւանդութիւնը դաշոյնի
հարուած մըն էր խեղճ աղջկան համար:

Ֆայիզէ հետզհետէ կը դառնար փետուրի պէս թեթեւ եւ նուաղկոտ: Գլուխը ծածկած ճերմակ քողով անիկա կարծես տեսիլք մըն էր անհրական եւ հեռաւոր: Անոր գեղեցկութիւնը հասեր էր իր լրումին, անցնելու մօտ եղող էակի մը գեղեցկութիւնը, որ արդէն կտրուած է այս աշխարհէն:

«Եթէ խօսի, կ'ըսես հիմա կը մարի»...

Իրիկուն մը Ֆայիզէ, գլուխը ճերմակ բարձին վրայ, ինձ խօսեցաւ անձանօթ երիտասարդին վրայ եւ խնդրեց որ մինակս կատարեմ նաւակով պտոյտը եւ այդպիսով մեր հաղորդակցութիւնը վերահաստատենք:

Ու մինակս նստած կարմիր թափշէ նստարանին վրայ, տխրութեամբ կատարեցի Ֆայիզէի պատուէրը, բայց միւս նաւակը չկար այլեւս: Անձանօթ երիտասարդը, որ յուզեր էր մեր սիրտը, անդարձ անհետացեր էր մեր հորիզոնէն: Ի գուր իմ նաւակս կ'երթեւեկէր Մայթեփէի առաջ... Յանկարծ ծանր տխրութիւն մը տիրապետեց ինձ. ես ալ այդպէս երթայի եւ անհետանայի անդարձ եւ նաւակս այլեւս չժամանէր ոչ մէկ փութոնք... Ու իմ ցաւս օրօրելու համար գիշերները միտքովս կ'երգէի... Երգ չէր այդ, այլ տեսակ մը ընթաց, որ մտածումս կը տանէր իր համաչափ ճօճումին մէջ: Երկու տարի յետոյ, վերյիշելով այդ պահը, գրեցի «Նաւակը» արձակ բանաստեղծութիւնը: Ան հրատարակուեցաւ եւ վերհրատարակուեցաւ քանի մը անգամներ: Նոյնիսկ թարգմանուեցաւ Ֆրանսերէնի եւ հրատարակուեցաւ Ռընէ Կիլի խմբագրութեամբ լոյս տեսնող պարբերականի մը մէջ եւ ոչ ոք չգիտցաւ՝ որ այդ բանաստեղծութիւնը ինձ ներշնչողը Շահապետտին անունով հիւանդ երիտասարդ մըն էր որ մեռեր էր յանկարծ արիւն փսխելով, նաւակով պտոյտի միջոցին եւ թերեւս փնտռելով այն երկու քողարկուած աղջիկները, որոնց հետ, հրաշալի վերջալոյսի մը մէկ պահուն, տժգոյն ժպիտ մը փոխանակեր էր:

Դուրեանի շիրիմը

Անչափ եռանդով անձնատուր եղեր էի ընթերցանութեան: Առաջին անգամ որ Ֆրանսերէն գիրք մը կարդացի, մինչեւ վերջը գրեթէ ամբողջովին հասկնալով, նոր հորիզոններ բացուեցան իմ առաջ:

Դպրոցը աւարտելէ յետոյ կտրուեր էի այն մարդոցմէ, որոնք մեզ հրահրուած վիճակի մէջ կը պահէին: Մտեր էի ինքնամփոփումի շրջանի մը մէջ: Ինքզինքս կը զգայի յոգնած, ինչպէս եթէ հիւանդութենէ մը դուրս ելած ըլլայի: Միւս կողմանէ կատարարութիւնը կարծես մեղմացուցեր էր իր խստութիւնները: Ընդհանուր ներումի հետեւանքով շատ մը բանտարկեալներ տուն վերադարձեր էին. նոր ձերբակալութիւններ չկային եւ ազգային բրոքագանառը որոշ չափով թուլցեր էր. ան անշուշտ ստացեր էր ուրիշ կերպարանք եւ ես հեռու կը գտնուէի առժամանակեայ կերպով անոր ազդեցութեան շրջանակէն:

Ժամերով կ'առանձնանայի սենեակս եւ կը կարդայի: Ուրիշ հարցեր եւ խնդիրներ սկսան ինձ զբաղեցնել եւ առաջին հերթին իմ դպրոցական ընկերուիիներուս եւ դեռ ուրիշ ծանօթ բարեկամուիիներու դրութիւնը, որոնք հակամարտութեան մէջ էին ոչ միայն հասարակութեան կարծիքին հետ, այլեւ իրենց ընտանիքին, իրենց ծնողներուն եւ գլխաւորաբար իրենց հօր հետ:

Այդ նորահաս աղջիկները առանձին դուրս չէին կրնար ելլել, անոնցմէ ոմանք ստիպման տակ էին ամուսնանալու այնպիսի մարդոց հետ, որոնց նկատմամբ ատելութիւն եւ արհամարհանք ունէին: Ազատ չէին հագնելու ինչպէս կ'ուզեն, վարուելու ինչպէս յարմար կը գտնեն, վերջապէս անոնք զրկուած էին ամենատարրական ազատութիւններէ եւ կզգային որ ուշ կամ կանուխ պիտի մտնէին ծնողական ցանկապատին մէջ, ուրկէ դուրս գալու եւ նոր կեանք մը ստեղծելու ցանկութիւնը ունեցեր էին:

Այդ օրերուն մեր կողքի տունը նոր վարձուորներ եկան: Այդ նոր ընտանիքը սգաւոր էր եւ իրենց տղան, Միհրան, որուն քոյրը նոր մեռեր էր, իմ ուշադրութիւնս գրաւեց, որովհետեւ մօրաքոյրերս ըսին որ տարօրինակ կերպով կը նմանի Զմբայենց Պետրոսին (Պետրոս Դուրեանին):

Շուտով եղանակը գտանք իրարու հետ բարեկամանալու: Գիրքեր փոխ կու տայինք իրարու եւ կը խօսէինք մեր ըրած ընթերցումներուն վրայ: Մեր տեսակցութիւնները տեղի կ'ունենային պարտէզի կողմի պատշգամբին վրայ, որ բաժնուած էր ցանկապատով մը: Միհրան ամէն բանէ վեր կը դասէր Դուրեանի բանաստեղծութիւնները եւ երբեմն կ'արտասանէր յուզումով եւ զգացումով եւ ես մտածելով Դուրեանին կը նայէի իր կամարածեւ յօնքերուն, որոնք կը գտնուէին

իր տժգոյն ճակատին վրայ: Եւ իրիկուն մը, երբ վարանող շարժումներով ինձ վերադարձուց փոխ տուած գիրքս, հասկցայ որ արտասովոր բան մը կայ եւ սիրային նամակ մը գտայ գիրքին մէջ:

Մեր պատանեկան սէրը կը կայանար իրարու հանդիպիլ ցանկով բաժնուած պատշգամբին վրայ, խօսիլ բանաստեղծութիւններու մասին եւ ստանալ իրմէ յասմիկի փունջեր. ըսեր էի որ նախասիրած ծաղիկս է յասմիկը:

Եւ օր մըն ալ նախաձեռնակ եղայ այցելութիւն մը կազմակերպել Դուրեանի շիրիմին:

Խեղճ տղան չհամարձակեցաւ մերժել, բայց անտարակոյս այն կարծիքը ունէր որ մեծ քաջագործութիւն մըն է աղջկան մը ժամադրութիւն տալ տունէն դուրս: Երբ երեկոյին որոշուած ժամուն Միհրանը գտայ գերեզմանատան դրան առաջ, ան դողահար վիճակի մէջ էր: Ես ջանացի անտարբեր երեւոյթ մը առնել եւ խօսիլ ասկէ անկէ, բայց կը զգայի որ չէի յաջողեր փարատել խեղճ երիտասարդին մտահոգութիւնը:

Սկսանք յառաջանալ անխօս: Երբ Դուրեանի շիրիմին հասանք, մինակ էինք: Միհրան այնքան տժգոյն էր որ վախցայ թէ պիտի հիւանդանայ: Մեղմօրէն ձեռքը առի եւ սեղմեցի գինքը պաշտպանելու համար իր տկարութեան դէմ: Յետոյ մոռցայ ամէն ինչ եւ ուժգնօրէն թափանցուեցայ Դուրեանի յիշատակով: Խոր զգացում մը ինձ գրաւեց ամբողջովին: «Սկիւտարի վերջալոյսներ» շարքին մէջ ջանացած եմ արտայայտել իմ այդ օրուան կրած տպաւորութիւնս: Շքեղ վերջալոյս մը իր բոցավառ շողերով խորքը կը կազմէր մեր այդ պահու յուզումին: Թռչուն մը յուսահատօրէն կ'երգէր բազկատարած թմբիի մը վրայէն: Կարծես տապանաքարերը, անոնց հովանի եղող սաղարթագեղ ծառերը մեզ կը դիտէին գարնացած: Հետզհետէ ուրիշ երիտասարդներ ալ եկան եւ առաջին ընկերու վարանումէն յետոյ հաղորդակցութիւն հաստատուեցաւ մեր մէջ: Խումբով կանգնած վաղամեռիկ բանաստեղծի շիրիմին առաջ, նոյն տրամադրութեամբ վարակուած, խորասուզուեցանք մտածմունքներու եւ երազանքի մէջ: Հետագային յաճախ գացեր եմ այցելութեան եւ միշտ այնտեղ գտեր եմ առանձին կամ խմբով երիտասարդներ: Այդ շիրիմը իմ ժամանակի եւ հետեւեալ սերունդի երիտասարդներուն ուխտատեղին էր:

Այդ իրիկուն, Սկիտարի գերեզմանատան մէջ մենք հասեր էինք մեր գունատ սիրոյ գագաթնակէտին, գոնէ ինձ համար այդպէս էր:

Դարձեալ մեր պատշգամներուն վրայ իրարու փոխ կու տայինք գիրքեր, դարձեալ Միհրան ինձ համար կը ճարէր յասմիկներ, բայց այլեւս կը ջանայի մեղմօրէն վերջ դնել Միհրանի սրտագեղումներուն, որոնք ինձ կը թուէին անհարկի եւ յաճախ ծիծաղելի:

Ես իմ տուրքս տուեր էի պոլսական սանթիմանթալիզմին եւ այլեւս այդ կարգի բան չպատահեցաւ ինձ:

Տիկին Տիսաբ եւ Թովմաս Թերզեան

Այդ օրերուն իմ ուշադրութիւնս գրաւեցին երկու բարեկամուհիներ, որոնք պայքարի մէջ էին իրենց ընտանիքներուն հետ: Անոնք երկուքն ալ ինձմէ երեք-չորս տարիով մեծ էին, բայց յաճախ կու գային ինձ մօտ, դառնօրէն կը գանգատէին իրենց գլխուն եկածներէն եւ որոշում կը կայացնէին ըմբօստութեան դրօշը պարզել: Անոնցմէ մէկը՝ Էօժէնի, ամէն իրիկուն տուն կը դառնար գլխիկոր, փարախը մտնող ոչխարի պէս եւ կ'ենթարկուէր անտրտունջ բարբարոս հօրը գայրոյթներուն: Միսը՝ Վերգինէ, որ քանի մը տարի յետոյ դարձաւ Տիրան Չրաքեանի (Ինտրայի) կինը, ատելի ըմբօստ էր եւ իր անկախութիւնը ապացուցանելու համար կը դիմէր արտասովոր միջոցներու: Ան կտրել տուաւ իր մազերը – ինչ որ շատ անսովոր բան էր այն ժամանակ – կը հագուէր չափազանց պարզ եւ տղամարդու փողկապ կը կրէր: Այդ բոլորը ինձ կը թուէին զարմանալի: Բնաւ անհրաժեշտ չէի համարեր ես ինքս արտաքին ձեւերու մէջ արտայայտելու իմ ազատութիւնս, բայց Վերգինէ կը համարէր որ այդ անհրաժեշտ էր խորտակելու համար իր շրջապատի բռնութիւնը: Անոնք երկուքն ալ կը խօսէին այն բանի մասին թէ պէտք է դուրս գալ «տափակ կեանք»է եւ բան մը ընել. բայց ի՞նչ ընել... Իրենք ալ չէին գիտեր ու յաճախ կ'իյնային տխրութեան եւ յուսահատութեան մէջ:

Միասին կը կարդայինք տիկին Տիսաբի գիրքերը եւ ֆենիմիստ հեղինակի երկին մէջ կը ջանայինք դարման մը գտնել մեզ յուզող հարցերուն: Մեզ երբեմն կը միանար Արշակունիի, որ կը բնակէր Սամաթիա, բայց յաճախ Սկիտար կու գար

ազգականներու մօտ: Այդ աղջիկները կը համարէին որ ես բացառիկ դրութեան մէջ եմ, քանի որ լուսաւորեալ հայր մը ունիմ, որ ինձ արգելք չի հանդիսանար: Խնդիրը այն էր որ ես առանց երկար-բարակ մտածելու սովոր էի գործնականապէս պայքարիլ արգելքներու դէմ, երբ անոնք ներկայանային եւ հօրս ազատախոհութիւնը բաւական չէր իմ ճանապարհէս հեռացնելու այն բոլոր արգելքները, որ յետամնաց մտայնութեամբ քաղքենի հասարակութիւնը ճնշիչ կերպով կը դնէր մեր ամենուս վրայ: Կեանքը ինձ ցոյց տուած է որ այդ պայքարը անողոր է եւ շարունակական:

Ինչ որ կը յուսային ինձմէ իմ ընկերուիիներս, այն էր որ ես գրէի այդ նիւթերու վրայ, վերջապէս բան մը ընէի. բայց ի՞նչ, չէինք կարող բանաձեւել:

Հետաքրքրական է այն բանը, որ այդ ընկերուիիներէս ոչ մէկը չէր գրաւուած ազգայնական բրոքականտէն: Այդ խնդիրները շատ դուրս կը մնային եւ հեռաւոր նպատակներ կը հետապնդէին, մինչդեռ իրենք ամէն օր կը տառապէին իրենց շրջապատէն եւ ստիպուած էին տեղի տալ իրենց ամենէն օրինաւոր իրաւունքներուն մէջ: Կ'ուզէին ուսմունք ստանալ, մասնակցիլ հասարակական կեանքին, ընկերներով պտոյտի երթալ, հաւարուիլ, ճամբորդել, եւայլն: Բայց եթէ այդ աղջիկներէն մէկը համոզուած ըլլար որ հնչակեան գրուելով (այն ատեն դաշնակցականներ դեռ չկային) կարող պիտի ըլլային խորտակել հօրը կամ ընտանիքին ուրիշ մէկ անդամի մը բռնութիւնը, այդ կ'ընէր:

Այս խնդիրները ինձ մտածել կու տային, երբ վերջապէս օր մը Արշակուիիին հետ որոշեցինք այցելութեան երթալ տիկին Տիւսաբին:

Սրտատրոփ բայց զինուած յանդգնութեամբ, մօտեցանք Ֆեմինիստ հայ գրագիտուիիին բնակարանին, որ կը գտնուէր Բերա: Արշակուիին անկացած էր յուզմունքէն եւ փախուստի միջոցներու կը դիմէր: Երբ դրան առաջ էինք, վերջին անգամ մը խնդրեց.

– Չապէ՛լ, ուրիշ օր մը կու գանք:

Ես մատս դրի դրան գանգին:

Սպասուիի մը դուռը բացաւ եւ մեզ առաջնորդեց սրահ մը, ուր յայտնեցինք դողահար շրթներով որ կ'ուզենք տիկին Տիսաբին ներկայանալ:

Ընդարձակ հիւրասենեակին խորքին մէջ, տիկին Սրբուիի Տիսաբ, սեւազգեստ, նստած էր թիկնաթոռի մը վրայ: Ան տասնեակ տարիներէ ի վեր անմխիթար մնացեր էր իր տասնըվեցամեայ աղջկան՝ Տորայի մահուան համար: Անոր ճերմակ եւ գանգուր մազերը կը գարդարէին գրաւիչ դէմքը, որ մեծ վիշտի մը դրոշմը կը կրէր: Ան մեզ տեսնելով – որ գրեթէ դեղեւելով կը քալէինք անվերջանալի սրահին մէջ – ընդառաջ եկաւ եւ ձեռք տուաւ: Անոր քիչ մը թանձր շրթները մեղմ ժպիտ մը ունէին եւ բարութիւն կ'արտայայտէին: Մէկ ձեռքով իմ եւ միւս ձեռքով Արշակուիիին ձեռքէն բռնած ան մեզ առաջնորդեց դէպի իր թիկնաթոռը եւ մեզ հրաւիրեց նստիլ իր երկու քովերը դրուած աթոռներուն վրայ: Մենք երկուքս ալ կորսնցուցեր էինք մեր բոլոր միջոցները եւ բոլորովին մոռցեր էինք այն խօսքերը, որ նախապէս պատրաստեր էինք: Բայց տիկին Տիսաբ ժամանակ չտուաւ որ մենք ընկղմինք մեր շուարումին մէջ: Ան անմիջապէս հարցումներ ուղղեց մեզ եւ քաջալերական ջերմ խօսքեր ուղղեց մեր հասցէին: Յայտնապէս զգածուած էր մեր այցելութենէն: Այդ միջոցին տիկին Տիսաբ մոռցուած հեղինակ էր: Շատեր չէին գիտեր նոյնիսկ թէ դեռ ո՞րչէ թէ մեռած: Նոր աստղ մը կը փայլէր Պոլսոյ հայ գրական երկնականամարին վրայ՝ Սիպիլը: Ան էր պաշտօնական գրագիտուիին: Կարդացեր էի Սիպիլի վիպակները եւ բանաստեղծութիւնները եւ այն ժամանակ յանդգնութիւնը ունէի չհաւանելու այդ սեռի գրականութեան, հակառակ ընդհանուր հիացումին: Ես այն կարծիքը ունէի որ ժանեակներու մեծանուն բանաստեղծուիին չնչին եւ անկարելորդ նիւթերով կը զբաղի: Իմ մտատրական նորագարթ ու մեծ ախորժակս յագուրդ չէր գտներ այդ գերանուրբ փափկութիւններով:

Տիկին Տիսաբ լսելով որ գրական ասպարէզին թեկնածու մըն եմ, ինձ նախազգուշացուց, ըսելով որ այդ ասպարէզը կնոջ համար աւելի շատ տատասկներ ունէր, քան դափնիներ: Ինձ ըսաւ թէ մեր իրականութեան մէջ դեռ անհանդուրժելի կը համարեն որ կին մը հրապարակ գայ եւ ուզէ իր տեղը գրաւել: Յաղթահարելու համար այդ բոլորը, պէտք էր միջակութենէ վեր ըլլալ: «Էրիկ մարդ գրագէտը ազատ է միջակ ըլլալ, բայց ո՛չ կին գրագէտը»:

Տիկին Տիսաբ իր գեղեցիկ աչքերը սեւեռեց իմ վրաս եւ խորհուրդ տուաւ որ նախ առողջութիւնս ամրացնեմ եւ յետոյ մտածեմ իմ ընելիքիս մասին:

Տիկին Տիսաբ խոր ազդեցութիւն գործեց մեր վրայ: Վերադարձին ոգեւորութեամբ կը խօսէինք. Արշակունիի գաղտնիքի մը պէս ինձ յայտնեց որ ինքն ալ կը փափաքի նուիրուիլ գրական ասպարէզին: Մենք երկուքս համաձայն էինք որ պէտք էր վեր ըլլալ միջակութենէ եւ այդ բանին հասնելու համար պէտք էր ստանալ բարձրագոյն ուսմունք: Երթալ Եւրոպա...

– Ա՛խ, հառաչեց Արշակունիի, երթալ Եւրոպա, բայց ի՞նչպէս... ու անոր դէմքը առաւ շուարումի մատնուած մէկու մը արտայայտութիւնը:

Արշակունիի այդ արտայայտութիւնը կրած է իր բոլոր կեանքին մէջ: Անիկա կարծես բարոյական հարուած մը կրած էր եւ սասանած էր: Ան գնաց Եւրոպա, նախ Փարիզ եւ յետոյ՝ Լոնտոն: Փարիզի մէջ երբ ես ուսանողուի էի, եկաւ ինձ տեսնելու Լոնտոնէն, ուր գիշերօթիկ վարժարան մըն էր: Ան խրտչեցաւ ուսանողուիի ազատ կեանքէս եւ այն սոցեալ խնդիրներէն, որ ինձ կը հետաքրքրէին: Դեռ Եւրոպայի մէջ, ան մտահոգ էր արդէն այն բանբասանքներուն համար, որ պիտի ընէին Պոլսոյ արուարձաններուն մէջ մեր մասին, երբ վերադառնայինք:

Արշակունիի գրած էր արդէն մէկ քանի էջեր եւ «Ուսանողուիի մը Յուշեր» վերնագրով հրատարակուած էր պարբերական մը մէջ: Պոլիս վերադառնալով ամուսնացաւ Թէոդիկին հետ եւ դարձաւ ամուսինին անխոնջ եւ հաւատարիմ աշխատակիցը: Անիկա խարտեաշ կին մըն էր, բարձրահասակ եւ բաւականին սիրուն, բայց այդ յիշատակած շուարումի արտայայտութիւնը կը խանգարէր իր դիմագիծերուն ներդաշնակութիւնը:

Արշակունիի ինքնուրոյն քիչ բան գրած է, բայց անտարակոյս շնորհ ունեցող գրագիտուի էր որ չէր հասած իր յատկութիւններու լրիւ զարգացման: Շատ վախկոտ էր եւ զգոյշ եւ իր գլխաւոր հոգն էր ոեւէ բանով չխրտչեցնել հասարակութիւնը:

Պատերազմի միջոցին ան ենթարկուեր էր մտահոգութիւններու եւ գրկանքներու եւ հիւանդացեր էր թոքախտով: Ջինադադարին գացեր էր Չուիցերիս դարմանուելու, ուր եւ մեռած է սանաթորիումի մը մէջ:

Մեր թաղային վարժարանի լրացուցիչ դասարանները աւարտելէս յետոյ դարձեալ եկաւ այն խնդիրը՝ թէ ի՞նչ պիտի ընեմ: Եթէ մանչ ըլլայի, անտարակոյս պիտի երթայի Կեդրոնական վարժարան, բայց համապատասխան աղջկանց վարժարան չկար: Հայրս միջոց մը մտածեց ինձ գիշերօթիկ դնել յունաց աղջկանց լիսէն, բայց կարգ մը նկատողութիւններ արգելք եղան ատոր: Յաճախ ցաւած եմ որ հօրս այդ լաւ միտքը չէ իրականացած: Այդ լիսէին մէջ, որ շատ փայլուն վիճակ ունէր, սորված պիտի ըլլայի հին ու նոր հելլէն լեզուն, ինչ որ մեծ հիմք պիտի ըլլար հետագային իմ համալսարանական ուսմունքի շրջանիս:

Այդ խնդիրը դեռ չէր վճռուած, երբ օր մը հայրիկիս հետ Գընայը կղզի գացած միջոցիս, շոգենաւին մէջ ծանօթացայ Թովմաս Թերզեանին:

Շոգենաւր թեթեւ տատանումներով կը յառաջանար Մարմարայի վրայ: Ես ու հայրս նստած էինք եզերքի նստարաններէն մէկուն վրայ եւ կը խօսէինք: Մեզմէ քիչ հեռու առանձին նստած էր ճերմակ մագերով, բայց առոյգ երեւոյթով մարդ մը, որ ուշադիր մեզ կը դիտէր: Յանկարծ ան ելաւ տեղէն, մօտեցաւ, բարեւեց եւ ուզեց ծանօթանալ: Հայրս քաղաքավարութեամբ իր քով տեղ տուաւ անոր: Այդ մարդը Թովմաս Թերզեանն էր: Ան իր զարմացումը յայտնեց որ հայր ու աղջիկ իրար հետ կը խօսակցէինք եռանդով:

– Կարծեցի որ յոյն էք, ըսաւ, եւ ահա լսեցի որ հայերէն կը խօսիք: Ասիկա շատ հագուադէպ բան մըն է, ըսաւ Թովմաս Թերզեան ոգետրութիւնով: Ես կը ճանչնամ յոյներ, որոնք թէ՛ հայր են եւ թէ դաստիարակ իրենց զաւակներուն, բայց հայերու մէջ դեռ չէի հանդիպեր ասանկ հաճելի եւ գովելի երեւոյթի:

Կամորջէն կղզի, Մախսուսէի շոգենաւր շատ դանդաղ կ'ընթանար, բայց մենք այլեւս չգգացինք ժամանակին անցնիլը: Հայրս եւ Թովմաս Թերզեան կը խօսէին նոր սերունդին, մանաւանդ աղջկանց դաստիարակութեան հարցերուն վրայ: Ես վերացած մտիկ կ'ընէի: Թովմաս Թերզեանի երկը ինձ ծանօթ էր եւ բերնուց գիտէի անոր մէկ բանաստեղծութիւնը.

«Օր պիտի գայ որ այս կենաց բեռը...»

Հիացումով կը դիտէի համբաւատր ծերունին, երբ ան ինձ դարձաւ եւ զիս հարցափորձեց իմ փափաքներու, ձգտումներու եւ ըրած ընթերցումներու վրայ: Ան ինձ տուաւ նաեւ խորհուրդներ եւ կարդալիք գիրքերու ցանկ սը: Այսպէս հասանք Գընալըի նաւամատոյցը, ուր իրարմէ բաժնուեցանք կրկին տեսակցելու խոստումով:

Կեանքը իմ առաջ կը բացուէր լայն ճանապարհներով: Դեռ այն ատեն ամէն ինչ պարզ էր, դիրին եւ ինձ կը թուէր որ ներկայացած դժուարութիւններուն յաղթելը խաղ սըն է: Ինձ ախորժակս մեծ էր, ձգտումներս բազմազան եւ իմ լարուած էութիւնս առիթ կը փնտռէր ինքզինքը արտայայտելու շռայլութեամբ եւ հրայրքով: